

Ս Վ Ք Տ

ԴԳՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՔ

ԵՒՄՈՆԻ ՏԷ ԱՄԻՉԻՍԻ

(ՏԵՍ ՀԱՅ ԻԷ. ԷՋ 116)

Վիկտոր Լեմանուէլիկ յոշարկաւորութեան հանրէսը

17, Յոնուար

Այսօր ժամը երկուքին հազիւ թէ մօայ 'ի դպրոց, վարժապետան կոչեց զՏէռօսի, որ քնաց գրասեղանին մօտ կեցաւ մեր դիմացը, և սկսաւ իւր թրթռուն հնչմամբն Պարտասանել, հետզհետէ բարձրացնելով իւր յստակ ձայնը և իւր երեսաց զոյնը կարմրելով:

— Զորս տարի առաջ այս օրս, այս ժամուս, կը հասնէր Պանթէոնի դիմացը 'ի Հռովմ՝ յուղարկաւորութեան կառքն յորում'կայր Վիկտոր Էմմանուէլի ԲՅ՝ դիակն, Խոսւլիոյ առաջին թագաւորին, որ մեռաւ յետ 29 ամաց թագաւորութեան, յորս խաւական մեծ հայրենիքն եօթն Տէրութեանց բաշխուած և ընկճեալ յօտարաց և 'ի բնաւորաց, փոխարկուեցաւ 'ի մի տէրութիւն՝ անկախ և ազաւ. յետ քսան և ինն ամաց թագաւորութեան, զոր ինքն պանծալի ըրաւ և բարբար զօրութեամբ՝ հաւատարմութեամբ, յանդգնութեամբ 'ի վտանգս, իմաստութեամբ 'ի յաղթանակս, հաստատամտութեամբ 'ի ձախողակս: Կը հասնէր յուղարկաւորութեան կառքը լին պտեղք, յետ պարտելու բոլոր Հռովմայ մէջ ծաղկանց անձրեայ մը տակ, անցնելով վշտագին անհուն բազմութեան մը լուութեան մէջէն, որք յամենայն կողմանց Խոսւլիոյ դիմեր էին, յառաջեալ զօրագլխոց քնդէ մը, պաշտօնէից և իշխանաց խմբէ մը, հետեւեալ յուղեկցութենէ գոնջից, յանհուն բազմութենէ գրօշակաց, 'ի ներկայացուցչաց երեք հարիւր քաղաքաց, յայնմ՝ յամենայնէ որ ժողովրդեան մը կարողութիւնը և փառքը կը ներկայացնէ, կը հասնէր վեհափառ տաճարին առջև՝ յորում տապանը կը սպասէր: Սոյն վայրկենին երկոտասան զբահաւորք կը հանեն զազազը 'ի կառայ: Նոյն պահուն կու տայր Խոսւլիո վերջին նրաժեշտի ողջոյնը իւր հանգուցեալ թագաւորին, իւր հինաւորց թագաւորին զոր այնքան սիրեր էր, յետին ողջոյնը իւր զինուորին, իւր հօրը, իւր պատմութեանը ամենէն աւելի բարեբազդ և ամենէն աւելի օրհնեալ քսան և ինն ամաց: Մեծ և հանդիսաւոր վայրկեան մ'եղաւ: Ամենուն հայեցուածքը և սիրան կը թմբայր՝ ընդ մէջ զազազին և Խոսւլիոյ բանակին ութսուն գնդաց թխացեալ գրօշակաց մէջ: Զորս ութսուն պաշտօնակալք կը կրէին՝ իւր անցքին վրայ գէմ առ գէմ կեցած: Վասն զի հոն էր Խոսւլիա, այն ութսուն նշանակաց մէջ՝ որք կը յիշեցնէին հազարաւոր մեռեալքն, արեանց հեղեղքն, մեր ամենէն աւելի սրբազան փառքերն, մեր սրբագոյն զոհերն, մեր սաստկագոյն ցաւերն: Գագազ բարձեալ 'ի զրահաւորքն՝ անցաւ, և այն ատեն ամենքն 'ի միասին խոնարհեցան 'ի նշան ողջունի, ինն գնդաց գրօշակներն, հին պատառուտուն գրօշակներն Կօթիոյի, Բասգաւենիոյի, Սրբոյն Լուչիայի, Նովարայի, Թրիմաւ, Պալէստրոյ, Սրբոյն Մարտինոսի, Գասթէլլիտարոյի, ութսուն սեաւ քօղերը խոնարհեցան, հարիւր միասալք արկեզ վրայ թափեցան, և այն սաստկագոյն խառն աղաղակը՝ որպէս թէ ամենուն

արինը եռացուց. — Ողջամբ երթիջիր, ազնիւ Թագաւոր, գիւցալն Թագաւոր, հաւատարիմ Թագաւոր: Դու անջնջելի պիտի մնաս 'ի սիրտ քու բովանդակ ժողովրդեանդ, քանի որ Իտալիոյ վրայ պիտի ծագէ արեգակը: Յետ որոյ գրօշուկք գուռազարար յերկինս բարձրացան, և Վիկտոր Թագաւորը գամբանին անմահական փառացը մէջ մտաւ:

Յրտերի արտաքսնայ 'ի դպրոցէ

21, Դարաթ

Մինչդեռ Տէոսոսի Թագաւորին յուզարկաւորութեան հանդիսին վրայ կը ճառէր, Յուսիթին միայն ծիծաղեցաւ: Երգասիկայ կ'ատենմ, չարասիրտ է: Երբ հայր մը 'ի դպրոց կու գայ յանդիմանելու զորդին, ասիկայ կը զուարճանայ. երբ մէկը կու լայ, ինքը կը ծիծաղի: Կառանի առջև կը դողայ և որմնադիրը կը ձեծէ՛ վասն զի կրտսեր է. կը տանջէ զՔուսոսին անդգայ բազուկ ունենալուն համար. կը ծաղրածէ զԻռէքոսին՝ զոր ամենքը կը յարգեն. մինչև իսկ կը ծաղրածէ զՏրօպէթթին, այն երկրորդ գատուներ, որ գուռազանօք կը քաշէ մանկիկ մ'ազատելու համար: Կը զայրացնէ քան զինքն սկարազոյնը, և երբ զերար կուփէլ սկսին, կը կատողի և կը սկսի վնաս հասցունել: Այն ցած ճակտին վրայ խորշէլի բան մը կը նկատուի, այն պղտոր աչացը մեջ, զորո գրեթէ միշտ ծածկեալ կը պահէ իւր մոմով պատեալ կտաւէ շինուած գգակին պահպանակին ներքև: Ամենին բանէ մը չի վախեր, վարժապետին երեսը կը ծիծաղի, կը դողայ երբոր կարենայ, անամօթ երեսով կ'ուրանայ, միշտ մեկու մը հետ կուռոյ մէջ է. գնդասեղք կը տանի 'ի դպրոց՝ քովննելը խայթելու համար. Թէ իւր և Թէ այլոց ներքնազգեստին կոճակները կը փրցնէ և տնոնցմով կը խաղայ. ունի թղթեայ պահարան, տետրակներ, գրքեր, ամենքն ալ մաշու, պատառուտուն, աղտոտ. քանոնը սկուայ սկուայ եղած, գրիչը կերուած, եղունգներն կրծուած, զգեստներն լի բիծերով և կոխներէ բոլորովին պատառուտուն: Կ'ըսեն Թէ մայրը հիւանդացեր է իբձէ կրած նեղութիւններէն, և Թէ իւր հայրը զինքը երեք անգամ տունէն մերժեր է. մայրը կուգայ ստէպ իւր վրայ տեղեկութիւն անենելու և միշտ Դայրով կը գառնայ: Ինքը կ'ստէ զչարոց, կ'ստէ զընկերոս, կ'ստէ զվարժապետը, վարժապետը երբեմն իւր ըրած արիկայութիւնքն չտեսնել կը կեղծէ, և ինքն գեռաւելի կը վատթարանայ: Զանաց ուղղել զինքն քաղցրութեամբ, այլ ինքն ծաղրածեց. իրեն ամենածանր խօսքեր ըսաւ, իսկ նա ձեռօք երեսը ծածկեց իբր Թէ լայր, մինչևն կը ծիծաղէր: Երեք օրուան համար դպրոցէն արտաքսուեցաւ, և քարձաւ 'ի դպրոց չարագոյն և լրբագոյն քան զառաջինն: Սր մը Տէոսոսի իրեն ըսաւ. — Այլ դագրէ 'ի չարութեանցդ, լէս տեսներ որ վարժապետը սաստիկ կը վշտանայ. — Իսկ ինքն սպառնացաւ փորոսն մէջ գամ մը խոթել: Սակայն վերջապէս այս առաւուտ շան մը պէս մերժուեցաւ: Մինչդեռ վարժապետն կու տար Կառանի յուշուարի ամօսբեայ պատմութիւնն՝ Սյարիացի րնրիսահայիսն առաջին օրինակը՝ մաքուր գրելու համար, ինքը յատակին վրայ պայթուցիկ մը նետեց, որ հրացանի հարուածոյ մը նման պայթեցաւ, և վերէն 'ի վար գպրոցը գողգոցացու: Բոլոր գասն սաստիկ սարսեցաւ: Վարժապետը կանգնեցաւ իսկոյն և գոչեց. — Յուսիթի՛, դպրոցէն դուրս ելիր: — Ինքն պատասխանեց. — Ես չեմ: — Բայց կը ծիծաղէր: Կրկնեց վարժապետը. — Դուրս ելիր. — Զեմ ելար, — պատասխանեց: Այն ատեն վարժապետը այլայլեցաւ, բռնեց բազուկներէն և յափշտակեց գրասեղանէն, ինքն կը ծեծկըրտուէր, ատամուկքը կը կրճտէր, այլ սաստիկ բռնութեամբ գուռս արտաքսուեցաւ:

Վարժապետն բռնած զինքն իրրու ծանր բեռ մը տարաւ առ Տեսուչն, և տպա միայնակ դարձաւ 'ի գասարանն, և նստեցաւ ստոլին առջև, ձեռքք գլուխը բռնելով, առաւայեալ, այնպիսի խոնր և վշտացեալ կերպարանօք, որ տեսողաց գուժը կը շարժէր: — Յետ երեսոնն ամաց որ գասարսօուժիւն կ'ընեմ, — աղաղակեց տիրաւ ձայն՝ գլուխը շարժելով: Ոչ որ շունչ կ'անոյր, Բարկուժենէն ձեռքերը կը գողցըզային, և Քակտին վրայ ունեցած ուղիղ կնձիւն այնքան խոր կ'երևար, որ կարծես վէրք ժ'է: Եղիելի՛ վարժապետ: Ամէնքն կը կարեկցէին: Տեսօստի կանգնեցաւ և ըսաւ. — Պ. Վարժապետ, մի վշտանար. մենք զքեզ կը սիրենք: — Այն ատեն զուարթացաւ նա սակաւ մի և ըսաւ. — Տղայք, առաջ տանինք մեր գասը:



### ԿԱՐՈՒՆՍ ԿՈՒՆՈՅ

Կարողոս Կունոյ՝ ներկայ դարուս հռչակաւոր երգահաններէն մին, ծնաւ 'ի Բարիզ յամին 1818 Յունիս 17ին: Սա իւր նախնական ուսումները կատարելէն յետոյ, մտաւ Բարիզու երաժշտութեան Բարձրագոյն Վարժարանը, ուր իրեն առաջնորդ ունեցաւ երաժշտական